ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE24-2293-4786-81B5 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/1271/02/26

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16.02.2026թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով ըստ հայցի «Ս Մոթորս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատասխանող), վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ Գևորգ Սարգսյան Աղասու ԱՁ-ի (այսուհետ նաև՝ Երրորդ անձ)՝ գնահատող հանձնաժողովի նիստի որոշումներն անվավեր ճանաչելու, որպես անվավերության հետևանք պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջների մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

–

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Պատասխանողի՝ գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրություններն անվավեր ճանաչելու, որպես անվավերության հետևանք պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունն անվավեր ճանաչելու և պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգի միջոցով դատարան ներկայացվել է 07.02.2026 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/1271/02/26 քաղաքացիական գործն, որը **մակագրվել է** Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին **09.02.2026 թվականին, ժամը 21:31-ին,իսկ հասանելի է դարձել 10.02.2026 թվականին**:

Դատարանի 11.02.2026 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգի միջոցով կրկին ներկայացվել է 12.02.2026 թվականին, որը **մակագրվել է** Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին **12.02.2026 թվականին, ժամը 21:30-ին,իսկ հասանելի է դարձել 13.02.2026 թվականին**:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն գլխի նորմերը տարածվում են էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով դատարանի և դատավարության մասնակիցների, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ անձանց կողմից իրականացվող գործողությունների վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ Համակարգն օգտագործող անձ է (են) համարվում՝ իրավաբանական անձինք, անհատ

ձեռնարկատերերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, **գնումների հետ կապված վեճերով վարույթում պատասխանողները**, ներկայացուցիչ հանդիսացող փաստաբանները, սնանկության գործով կառավարիչները, նոտարները և արտոնագրված հաշտարարները՝ **անկախ Համակարգի միջոցով որևէ անգամ որևէ գործողություն կատարած լինելուց կամ չլինելուց**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բոլոր դատավարական փաստաթղթերը (հայցադիմում, դիմում, բողոք, պատասխան, դիրքորոշում, միջնորդություն և այլն) կազմվում և **ներկայացվում են Համակարգի միջոցով**՝ Համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին և առաջադրվող պահանջներին համապատասխան, **բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների, որոնք ներկայացվում են միայն նյութական եղանակով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր ապացույցները ներկայացվում են դրանք սույն օրենսգրքով նախատեսված դատավարական փաստաթղթերին կցելու և **Համակարգով ուղարկելու միջոցով**:

Վերոգրյալի հաշվի առնմամբ Դատարանը գտնում է, որ պատասխանող «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ից պետք է պահանջել «ԵԱ-ԳՀԾՁԲ-25/92» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **էլեկտրոնային համակարգի միջոցով** (**բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ, 124-րդ, 199-րդ և 200-րդ, 234.6-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Ս Մոթորս» ՍՊԸ-ի ընդդեմ «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ Գևորգ Սարգսյան Աղասու ԱՁ-ի՝ գնահատող հանձնաժողովի նիստի որոշումներն անվավեր ճանաչելու, որպես անվավերության հետևանք պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

2. «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ից պահանջել դատարան ներկայացնել «ԵԱ-ԳՀԾՁԲ-25/92» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **էլեկտրոնային համակարգի միջոցով** (**բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ **հնգօրյա ժամկետում**:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Digitally signed by YERITSYAN SARGIS 3207830072 Date: 2026.02.16 17:15:06 AMT **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am